PENAL REFORM INTERNATIONAL

TOOLBOX ON THE UN BANGKOK RULES

# ՄԱԿ-ի Բանգկոկյան կանոններ՝ կին իրավախախտների և բանտարկյալների վերաբերյալ

## Հակիրճ ուղեցույց



**Միացյալ ազգերի կազմակերպության Բանգկոկյան կանոնները՝ կին իրավախախտների և բանտարկյալների վերաբերյալ**

Սույն հրապարակումը պատրաստվել է Միացյալ Թագավորության Կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Սույն փաստաթղթի բովանդակության միակ պատասխանատուն Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպությունն է և այն ոչ մի պարագայում չի կարող համարվել Միացյալ Թագավորության Կառավարության դիրքորոշման արտահայտություն:

Հայերեն տարբերակը պատրաստվել է AISPIRA ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության կողմից և իրականացվում է Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի, «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» կազմակերպության կողմից:

Սույն փաստաթուղթը կարելի է ազատ ուսումնասիրել, համառոտագրել, վերահրատարակել և թարգմանել հատվածաբար կամ ամբողջությամբ՝ պայմանով, որ այն չօգտագործվի վաճառքի կամ առևտրային նպատակներ հետապնդող այլ գործունեության համատեքստում: Սույն հրապարակման բովանդակության ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպության կողմից: Պարտադիր է պատշաճ հղում անել Միջազգային բանտային բարեփոխումներ կազմակերպությանը և սույն փաստաթղթին: Հարցերը կարող եք ուղարկել հետևյալ էլ. փոստին publications@penalreform.org.

**Penal Reform International**
info@penalreform.org
Twitter: @PenalReformInt
Facebook: @penalreforminternational
www.penalreform.org

Այն առաջին անգամ լույս է տեսել 2013թ. հուլիսին:
© Penal Reform International 2013

Գրաֆիկական դիզայնը և նկարազարդումը՝ Ալեքս Վալիի Alex Valy. Նկարազարդումները՝ Ջոն Բիշոփի.



# Միացյալ ազգերի կազմակերպության Բանգկոկյան կանոնները՝ կին իրավախախտների և բանտարկյալների վերաբերյալ

Ողջ աշխարհում **ավելի քան կես միլիոն** կին և աղջիկ իրենց պատիժն են կրում մեղադրական դատավճռից հետո, կամ սպասում են իրենց դատավարությանը, և հետևաբար՝ կարող են համարվել անմեղ: Քրեական արդարադատության համակարգերը սովորաբար անտեսում են երկրների բանտային բնակչության մոտավորապես երկուսից ինը տոկոսը կազմող այս կանանց և աղջիկների հատուկ կարիքները: ՄԱԿ-ի Բանգկոկյան կանոնները ուղղված են այս կարիքներին:

## Կին բանտարկյալների բնութագիրը

Գենդերային հավասարության չենք հասնի, եթե կին իրավախախտների հետ վարվենք այնպես, ինչպես տղամարդ բանտարկյալների: Այն հանգամանքները, որոնցում կանայք քրեորեն պատժելի արարք են կատարում, տարբերվում են տղամարդկանց՝ քրեորեն պատժելի արարք կատարելու հանգամանքներից: .



### Փաստեր

- Հանցագործ կանանց զգալի մասը բանտում է խտրականության և զրկանքների բազմաթիվ շերտերի ուղղակի կամ անուղղակի հետևանքով:
- Կանայք հիմնականում կատարում են աղքատության հետ կապ ունեցող թեթև հանցագործություններ, ինչպիսիք են գողությունը, խաբեությունը և այլ մանր՝ թմրամիջոցների հետ կապված իրավախախտումներ:
- Կանանց միայն փոքր մասն է դատապարտվում բռնի հանցագործությունների համար, և նրանց մեծամասնությունը անձամբ բռնության զոհ է եղել:



# Բանգկոկյան կանոններ



Քանի որ կանայք և աղջիկները բանտային բնակչության մեկ տասներորդից քիչ մաս են կազմում, նրանց առանձնահատկություններն ու կարիքները չեն հատկորոշվում և մեծ մասամբ չեն բավարարվում քրեական արդարադատության համակարգերի կողմից: Բանտերն ու բանտային ռեժիմները՝ սկսած ճարտարապետությունից և անվտանգության ընթացակարգերից մինչև առողջապահություն, կապ ընտանիքի հետ և ուսման հնարավորություններ, սովորաբար նախատեսված են տղամարդկանց համար:

Դրանից բացի՝ քրեական արդարադատության համակարգի՝ կանանց կարիքները հաշվի առնելու միջազգային չափանիշներում կար բաց: Այս բացը լրացվեց 2010 թ. դեկտեմբերին, երբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց ԿԻՆ բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և կին դատապարտյալների հանդեպ կիրառվող՝ ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ կանոնները (Բանաձև A/RES/65/229):

Կանոնները շատ կարևոր են կին իրավախախտների և բանտարկյալների իրավունքները պաշտպանելու համար, և դրանք ուղղակիորեն անդրադառնում են կանանց տարբեր կարիքներին և տարբեր իրավիճակներին, որոնցում նրանք եղել են: Բանգկոկյան կանոնները նաև առաջին միջազգային գործիքն է, որն անդրադառնում է իրենց ծնողի հետ բանտում գտնվող երեխաների կարիքներին:

Միաձայն կողմ քվեարկելով Բանգկոկյան կանոններն ընդունելուն՝ ՄԱԿ-ի 193 անդամ երկրներն ընդունեցին, որ քրեական արդարադատության համակարգում կանայք իրապես ունեն իրենց սեռին հատուկ հատկանիշներ և կարիքներ, և համաձայնեցին և՛ հարգել, և՛ բավարարել դրանք:



## Ո՞ւմ են պաշտպանում Բանգկոկյան կանոնները:

- Կին բանտարկյալներին, ովքեր բանտում են և սպասում են իրենց դատավարությանը, և հետևաբար՝ ենթադրվում է նաև, որ կարող են լինել անմեղ, ինչպես նաև նրանց, ովքեր բանտում կրում են իրենց պատիժը՝ համապատասխան վճռից հետո: Կանոնները պաշտպանում են նաև պետության կողմից, այսպես կոչված, «պաշտպանության նպատակով» բանտում գտնվող կանանց:
- Կին իրավախախտներին, ովքեր ստանում են այլ պատիժ, որը ազատազրկում չի ենթադրում (ազատազրկման հետ կապ չունեցող միջոց կամ պատիժ):
- Բանտարկված ծնողների երեխաներին, ովքեր բանտում են իրենց ծնողի հետ:
- Որոշ կանոններ պաշտպանում են նաև տղամարդ բանտարկյալներին և իրավախախտներին:

  Օրինակ՝ ճանաչվում է երկու ծնողների որոշիչ դերը, և համապատասխանաբար՝ որոշ կանոններ հավասարապես վերաբերում են տղամարդ բանտարկյալներին և այն իրավախախտներին, ովքեր հայր են:

**Հաշվարկված է, որ ողջ աշխարհում միլիոնավոր երեխաներ բանտում գտնվող ծնող ունեն, և տասնյակ հազարավոր երեխաներ ապրում են բանտում՝ իրենց մայրերի հետ:**



## Ինչո՞ւ են դրանք կոչվում Բանգկոկյան կանոններ:

ՄԱԿ-ի Բանգկոկյան կանոնները նախաձեռնվել են Թաիլանդի կառավարության կողմից: Նորին թագավորական մեծություն՝ Թաիլանդի արքայադուստր Բաջրակիտիաբհան առանցքային դեր է ունեցել Կանոնների մշակման գործում:

**Հորդանանի նման երկրներում կանայք բանտարկվում են երբեմն ավելի քան տասը տարի ժամկետով՝ «պատվի համար հանցագործություններից պաշտպանելու» հիմքով:**

**Անգլիայում և Ուելսում բանտում գտնվող կանայք տասն անգամ ավելի շատ են հակված ինքնավնասման, քան բանտում գտնվող տղամարդիկ:**



# Ի՞նչ են ասում Բանգկոկյան կանոնները:

70 կանոնները ուղղորդում են քաղաքականություն մշակողներին, օրենսդիրներին, պատժի ենթարկող մարմիններին և բանտի աշխատակիցներին՝ նվազեցնելու կանանց անհարկի ազատազրկումը և բավարարել ազատազրկված կանանց հատուկ կարիքները:

## Կանանց բանտ մի՛ նստեցրեք

Բանգկոկյան կանոնները ուղղություն են տալիս թե նախնական կալանքի և թե մեղադրական դատավճռից հետո պատժի նշանակման՝ գենդերային հարցերի նկատմամբ զգայուն այլընտրանքների վերաբերյալ՝ անդրադառնալով իրավախախտումների ամենատարածված դրդապատճառներին: Դրանք ընդունում են, որ բանտը սովորաբար անարդյունավետ և հաճախ վնասակար լուծում է հանցագործություն կատարած կանանց պարագայում, որը խոչընդոտում է բանտից ազատ արձակվելուց հետո նրանց սոցիալական վերաինտեգրմանը և արդյունավետ ու օրինապահ կյանք վարելու կարողությանը:

Բանտին գենդերազգայուն այլընտրանքի օրինակ է տեղում երեխաների խնամքի հարմարություններով խորհրդատվական ծառայությունը: Սա լուծում է այն կին իրավախախտների համար, ովքեր մայր են, և նրանց հնարավորություն է տալիս աշխատելու հանցավոր վարքի հիմնական պատճառների հետ՝ միաժամանակ խնամելով իրենց երեխաներին:





Ծննդաբերության ժամանակ կանանց շղթայելը դեռևս տարածված պրակտիկա է որոշ երկրներում, այդ թվում՝ Միացյալ Նահանգներում:



## Բանտ ուղարկվելու դեպքում...

Բանգկոկյան կանոններն անդրադառնում են բանտում գտնվող կանանց և աղջիկների տարբեր կարիքներին՝ ուղղորդելով բանտային ռեժիմի մի շարք առանձնահատկությունների հարցում. առողջապահություն, վերականգնողական ծրագրեր, բանտի աշխատակիցների վերապատրաստում և այցելության իրավունքներ:.

### Ապահովել պատշաճ առողջապահական ծառայություններ

Վերարտադրողական առողջապահությունից բացի՝ անհրաժեշտ են նաև գենդերազգայուն արձագանքներ՝ հոգեկան առողջության, թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև այլ հիվանդությունների բուժման համար: Կին բանտարկյալները պետք է կանխարգելիչ առողջապահական ծառայություններին ունենան նույն հասանելիությունը (ինչպիսիք են կրծքագեղձի քաղցկեղի սկրինինգ), ինչ առաջարկվում է կանանց համայնքում:

### Մարդկային վերաբերմունք ցուցաբերել կանանց նկատմամբ

Կանոնները պահանջում են կանանց նկատմամբ դրսևորել մարդկային և արժանապատվության նկատմամբ հարգալից վերաբերմունք: Օրինակ՝ ծննդաբերության ցավերի, ծննդաբերության ժամանակ և ծննդաբերությունից անմիջապես հետո արգելվում է զսպման գործիքների օգտագործումը: Մեկուսի բանտարկումը կամ մեկուսացման ձևով կարգապահական պատժի սահմանումը արգելվում է կիրառել հղի կանանց, մանկահասակ երեխա ունեցող կանանց և կրծքով կերակրող մայրերի դեպքում:



## Պահպանել արժանապատվությունը զննման ժամանակ

Զննման ընթացակարգերը պետք է հարգեն կնոջ արժանապատվությունը: Հագուստի վրայից անձնական զննման, և հատկապես՝ մերկ կամ միջամտող (ինվազիվ) զննման ժամանակ չարաշահումների ռիսկը հաշվի առնելով՝ այս զննումները պետք է իրականացվեն կին աշխատակիցների կողմից: Պետք է մշակվեն այլընտրանքային սկրինինգային մեթոդներ:



## Պաշտպանություն բռնությունից

Կին բանտարկյալները գտնվում են բանտում բռնաբարության, սեռական ոտնձգությունների և նվաստացնող վերաբերմունքի հատկապես բարձր ռիսկի տակ: Նրանք խոցելի են բանտի աշխատակիցների և այլ բանտարկյալների կողմից սեռական ոտնձգությունների բոլոր տեսակների նկատմամբ, այդ թվում՝ կին բանտարկյալներին կարող են ոչ պատշաճ դիպչել զննումների ժամանակ, և նրանց կարող են նայել հագնվելիս, ցնցուղ ընդունելիս կամ զուգարանից օգտվելիս:

## Ապահովել բանտարկյալների երեխաներին

Բանտի ծառայությունները պետք է ապահովեն իրենց մայրերի հետ բանտում գտնվող երեխաների բոլոր կարիքների բավարարումը՝ լինի դա բժշկական, ֆիզիկական կամ հոգեբանական: Քանի որ այս երեխաները բանտարկյալներ չեն, նրանց հետ չպետք է վարվել բանտարկյալի պես: Կանոնները նաև պահանջում են հատուկ միջոցառումներ մայրերի համար՝ մինչ նրանց՝ բանտ ընդունվելը, որպեսզի նրանք կարողանան կազմակերպել այլընտրանքային խնամք՝ դրսում գնվող երեխաների համար: .

> Շատ բանտերում ընդունված պրակտիկա է այցելություններից հետո կանանց ինվազիվ զննման ենթարկելը, ինչի պատճառով նրանք խուսափում են ընտանեկան այցելություններից:



Բանգկոկյան կանոնները լրացնում են առկա ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները և Ազատազրկման այլընտրանքների վերաբերյալ Տոկիոյի կանոնները:

## Թղթից՝ գործնական կիրառում

Բանգկոկյան կանոնները մեծ առաջընթաց են բանտում գտնվող կանանց և իրավախախտ կանանց իրավունքների առումով: Այժմ չափանիշները պետք է կիրառվեն գործնականում:

Կանոններից շատերի իրականացման համար անհրաժեշտ են ոչ թե լրացուցիչ ռեսուրսներ, այլ իրազեկման, մոտեցման և պրակտիկաների փոփոխություն, և հատկապես՝ նպատակաուղղված ներդրում՝ բանտի աշխատակիցների, քաղաքականություն մշակողների, բանտերի ղեկավարների և այլոց վերապատրաստման համար, ովքեր առնչվում են կանանց՝ քրեական արդարադատության համակարգում:



# Կանոնների իրականացման գործիքակազմ

**Մենք ունենք մի շարք գործնական ռեսուրսներ, որոնք կօգնեն ձեզ գործնականում կիրառել ՄԱԿ-ի Բանգկոկյան կանոնները: Դրանք հասանելի են այստեղ՝ www.penalreform.org/priorities/women-in-the-criminal-justice-system**

Գործիքները հասանելի են մի շարք լեզուներով:

### Ուղեցույց

Ուղեցույց յուրաքանչյուր կանոնի համար, առաջարկվող միջոցառումներ՝ կանոնները քաղաքականության և գործնական մակարդակում իրականացնելու համար՝ նոր գաղափարների ոգեշնչման համար լավ պրակտիկայի օրինակներով:

### Իրականացման համաթիվ

Կանոնների կատարման գնահատման համապարփակ ստուգաթերթ՝ կազմված տարբեր դերակատարների համար: Այն կարող է օգտագործվել նոր քաղաքականություններ և ռազմավարություններ մշակելիս:

Երկու փաստաթղթերն էլ հրապարակվել են Թաիլանդի արդարադատության ինստիտուտի հետ համատեղ:

### Առցանց դասընթաց

Ինքնակրթման եղանակով, առցանց անվճար դասընթաց, որը պարունակում է Կանոնների վերլուծություն,  ինտերակտիվ գնահատականներ և իրական կյանքում Կանոնների կիրառում: Դասընթացի վերջում տրվում է վկայական: Գրանցվեք հետևյալ կայքում penalreform-elearning.org:

### Գենդերազգայուն մշտադիտարկման ուղեցույց

Ուղեցույց, որը կօգնի կալանավայրերի մշտադիտարկում իրականացնող մարմիններին հաշվի առնել գենդերային հարցերն իրենց աշխատանքում և անդրադառնալ կալանքի տակ գտնվող կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը: Հրապարակվել է Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի հետ համատեղ:

### Էլեկտրոնային հրատարակություն

Քրեական արդարադատության համակարգում կանանց, Բանգկոկյան կանոնների, ինչպես նաև Կանոններին առնչվող՝ PRI-ի և այլոց կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ եռամսյակային ամփոփ տեղեկատվություն: Գրանցվեք՝ ուղարկելով նամակ հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ info@penalreform.org:

### Ամփոփ տեղեկատվություն

էՀասանելի է PRI-ի ամփոփ տեղեկատվությունը, որը քարտեզագրում է  արդարադատության համակարգում կին ենթադրյալ մեղադրյալների հանդեպ խտրականության վերաբերյալ մտահոգությունները: «Կալանքի տակ գտնվող աղջիկները» ամփոփումը ներկայացնում է աղջիկների առջև ծառացող մարտահրավերներն ու խնդիրները և նրանց պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով առաջարկություններ:

PENAL REFORM INTERNATIONAL

FAIR AND EFFECTIVE CRIMINAL JUSTICE


**Penal Reform International Headquarters**

The Green House
244-254 Cambridge Heath Road
London E2 9DA
United Kingdom

The Hague Humanity Hub
Fluwelen Burgwal 58
2511 CJ Den Haag
Netherlands

info@penalreform.org

@PenalReformInt
@Penalreforminternational

**Penal Reform International in Central Asia**

Syganak str. 29
Nur-Sultan
Kazakhstan

info@penalreform.org

**Penal Reform International in Middle East and North Africa**

22 Amro Bin Dinar
Amman
Jordan

priamman@penalreform.org

**Penal Reform International in South Caucasus**

prisouthcaucasus@penalreform.org

**Penal Reform International in Sub-Saharan Africa**

Plot 8, Kisozi Close
Kisozi Complex
Nakasero
Kampala
P.O. Box 11455
Uganda

africa@penalreform.org


**WWW.PENALREFORM.ORG**